

2016թ. փետրվարի 27-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 27-ը:

Նախագահ՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի ներկայացում:

/զեկ՝ ԲՖ դեկան Թ.Ասոյան/

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի ներկայացում:

/զեկ՝ ԲՆՖ դեկան Մ.Ավագյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2015-2016 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը ներկայացրեց ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանը: Խոսելով բուհերի վարկանիշավորման մասին՝ նա ասաց, որ ԳՊՀ-ում աշխատանքներն ընթանում են ճիշտ ուղիով, քանի որ այդ սանդղակում մեր համալսարանը բարձր տեղ է գրավել, սակայն նկատի ունենալով կենսական բոլոր ոլորտներում արագ զարգացումները՝ պետք է նույնքան արագ արձագանքել դրանց՝ ուսուցման ոլորտ ներառելով նոր կրթական ծրագրեր, կիրառելով նոր կազմակերպչական և մանկավարժական տեխնոլոգիաներ:

Զեկուցողը նախ անդրադարձավ ընդունելությանը՝ նշելով, որ այստեղ միտումները բացասական են, ապա ներկայացրեց ուսանողների շարժը ֆակուլտետում:

Ֆակուլտետի առաձաղիմության հետ կապված վիճակագրությունն ու վերլուծությունները Թ.Ասոյանը ներկայացրեց նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատությամբ: Արդյունքների ամփոփումից պարզվում է, որ ն՛ բակալավրիատում, ն՛ մագիստրատուրայում առաջադիմությունը բարձրացել է:

Ժամանակի պահանջներն արտացոլելու համար պետք է ուշադրության կենտրոնում պահել ուսպլաններն ու առարկայական ծրագրերը: Ֆակուլտետի ամբիոններում, խորհրդում պարբերաբար քննարկվում են դրանց հետ կապված փոփոխությունները, արդյունքում մի շարք նոր դասընթացներ են մտել ուսպլան: Կրթական ծրագրերի իրականացումը ապահովում է ֆակուլտետի որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, գիտական սեմինարներ:

Թ.Ասոյանը նշեց, որ 2-րդ կիսամյակում աշխատանքներն ավելի շատ են լինում՝ կապված դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության, ամփոփիչ ատեստավորման, խորհրդատվությունների կազմակերպման և այլ միջոցառումների հետ, ուստի ներկայացված գործողությունների ծրագիրն ավելի հազեցած ու բազմազան է:

Օրակարգի 2-րդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանը: Նա ասաց, որ բնագիտական ֆակուլտետում աշխատանքները տարվել են համաձայն ֆակուլտետի զարգացման հայեցակարգի և կոռուպցիայի դեմ տարվող պայքարի ռազմավարական ծրագրի: Աշխատանքները ընթացել են համակարգված, ցուցաբերվել է միասնական մոտեցում: Հրավիրվել են ֆակուլտետի խորհրդի նիստեր, որոնցում քննարկվել են ուսումնական, կազմակերպչական գործընթացներին վերաբերող բազմաթիվ հարցեր: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ 2015թ. ընդունելությանը: Նշվեց, որ ուսանողների սակավաթվությունը հիմնականում պայմանավորված է եղել միասնական քննություններին ցածր միավորներ ստանալով: Ներկայացվեցին առաջադիմության ցուցանիշներն ըստ բաժինների, կուրսերի և ֆակուլտետի: Ֆակուլտետային կյանքը հետաքրքիր են դարձրել կազմակերպված բազմաբնույթ

միջոցառումները՝ այդ թվում նվիրված Ընտանիքի տարվան, Սպիտակի երկրաշարժին, և ֆակուլտետային ու հանրապետական գիտաժողովները: Ուշադրություն է դարձվել պրոֆեսորադասա-խոսական անձնակազմի համալրման հարցերին: Ուսումնական գործընթացը հաջողությամբ կազմակերպելու նպատակով վերանայվել են ուսումնական պլանները, թարմացվել են առարկայական ծրագրերը: Ձևավորվել է լաբորատորիա, ձեռք են բերվել սարքավորումներ և դասագրքեր, ֆակուլտետը մասնակցել է միջազգային ծրագրերի, որոշ ուսանողներ սովորել են այլ երկրներում: Այնուհետև ներկայացվեց 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը:

Ընթացիկ հարցերը վերաբերում էին ասպիրանտուրայի բացման և ասպիրանտուրայում ընդունելություն կազմակերպելու հարցերին: Գիտխորհրդի քննարկման և հաստատման ներկայացվեց «ԳՊՀ-ում ասպիրանտուրայի գիտակրթական ծրագրի ընդունելության, ուսուցման կանոնակարգը»: Գիտխորհուրդը հավանություն տվեց կանոնակարգին և առաջարկեց հաստատել այն:

Ջեկուցումների շուրջ ելույթ ունեցան գիտխորհրդի անդամները:

Հիմք ընդունելով զեկուցումներն ու ելույթները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1. ԲՖ դեկան Թ.Ասոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Հավանություն տալ ԲՖ դեկան Թ.Ասոյանի ներկայացրած գործողությունների ծրագրին:

3.ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.Հավանություն տալ ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի ներկայացրած գործողությունների ծրագրին:

5.Հաստատել «ԳՊՀ-ում ասպիրանտուրայի գիտակրթական ծրագրի ընդունելության, ուսուցման կանոնակարգը»:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ.Ասոյան

